ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 150-Ա

ք. Երևան

«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք ընդունելով «ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊ ընկերության՝ Վայք քաղաքում հատկացված հաճախականությունը փոխելու վերաբերյալ 2025 թվականի նոյեմբերի 28-ի և 2025 թվականի դեկտեմբերի 15-ի դիմումները, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2025 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 01/11.1/10306-2025 գրությունը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 52-Ա որոշմամբ «ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊ ընկերությանը Վայք քաղաքում հատկացված 103.9 ՄՀց հաճախականությունը փոխարինել 107.7 ՄՀց հաճախականությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Գ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 19
ք. Երևան